# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ
# ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavir.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 հոկտեմբերի 2021 թվականի N 93-Ա

### ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝

ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1.Հաստատել Արմավիր համայնքի ավագանու 2021 թվականի հոկտեմբերի 15-ի թիվ 09 արտահերթ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

2.Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԲԱՐՍԵՂՅԱՆ ՀԱՅԿ

ԴԱՐԲԻՆՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ԴՈԼԻՆՅԱՆ ՀԱՅԿ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԼԵՌՆԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԽԱՉԻԿ

ՄԵԼՈՅԱՆ ԱՐՍԵՆ

ՇԻՐՎԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ

2021թ. հոկտեմբերի 15
ք. Արմավիր

ՀԱՎԵԼՎԱԾ
ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի
ԹԻՎ 09 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ
ԹԻՎ 93-Ա ՈՐՈՇՄԱՆ

1.Օրակարգը հաստատելու մասին

/Զեկ.՝ Դ. Խուդաթյան/

2.Արմավիր համայնքի 2021 թվականի բյուջեի ինն ամսվա կատարման մասին հաղորդում

/Զեկ.՝ Ռ. Մանուկյան/

3.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 101-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

/Զեկ.՝ Ռ. Մանուկյան/

4.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 72-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

/Զեկ.՝ Մ. Կոստանյան/

5.Անշարժ գույքի հարկի արտոնություններ սահմանելու մասին

/Զեկ.՝Մ. Կոստանյան/

6.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու մասին

/Զեկ. Մ. Կոստանյան/

7.Տեղական վճարի արտոնություններ սահմանելու մասին

/Զեկ.՝ Ար. Դոլինյան/

8. Անշարժ գույքի հարկի և փոխադրամիջոցների գույքահարկի արտոնություններ սահմանելու մասին

/Զեկ.՝Ա. Տիգրանյան/

9. Օգնություն հատկացնելու մասին

/Զեկ.՝ Թ. Շառոյան/

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ
# ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavir.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 հոկտեմբերի 2021 թվականի N 94-Ա

### ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԻՆՆ ԱՄՍՎԱ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով՝

ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1.Արմավիր համայնքի 2021 թվականի բյուջեի ինն ամսվա կատարման մասին հաղորդումը (կցվում է) ընդունել ի գիտություն:

2.Որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԲԱՐՍԵՂՅԱՆ ՀԱՅԿ

ԴԱՐԲԻՆՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ԴՈԼԻՆՅԱՆ ՀԱՅԿ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԼԵՌՆԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԽԱՉԻԿ

ՄԵԼՈՅԱՆ ԱՐՍԵՆ

ՇԻՐՎԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ ԽՈՒԴԱԹՅԱՆ**

2021թ. հոկտեմբերի 15
ք. Արմավիր

ՀԱՎԵԼՎԱԾ
ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021Թ.
ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 15 -Ի ԹԻՎ 94 - Ա
ՈՐՈՇՄԱՆ

ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2021Թ. ԲՅՈՒՋԵԻ ԻՆՆ ԱՄՍՎԱ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ
ՀԱՂՈՐԴՈՒՄ

## ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

Արմավիր համայնքի 2021թ. բյուջեն ինն ամսում ըստ եկամտատեսակների կատարվել է հետևյալ համամասնություններով.

### 1.ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

Հարկային եկամուտների գծով ինն ամսում նախատեսված 176700,0 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել է 152290.0 հազ. դրամ կամ կատարվել 86.2% -ով՝ այդ թվում.

1. Հողի հարկի գծով նախատեսված 15300,0 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել է 10212.4 հազ. դրամ կամ կատարվել է 66,7 % - ով:
2. Գույքահարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների համար պլանով նախատեսված 36400,0 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել է 24886.0 հազ. դրամ կամ կատարվել է 68.4 %-ով:
3. Գույքահարկ փոխադրամիջոցների համար պլանով նախատեսված 125000,0 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել է 117191.6 հազ. դրամ կամ կատարվել է 93.8 %-ով:

### 2. ՏՈՒՐՔԵՐ

Տուրքերի գծով իննամսյակում նախատեսված 34445.0 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել է 48918.2 հազ. դրամ կամ կատարվել 142.0 %-ով:

1. Պետական բյուջե վճարվող պետական տուրքերի գծով նախատեսված 15375,0 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել է 24617.9 հազ. դրամ կամ կատարվել 160.1 %-ով:
2. Տեղական տուրքերի գծով նախատեսված 19070.0 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել է 24300.3 հազ. դրամ կամ կատարվել է 127.4 %-ով:
3. Նույն թվում՝

ա) համայնքի տարածքում նոր կառուցվող օբյեկտների և շինությունների շինարարությունը սկսելու թույլտվության մուտքերի գծով նախատեսված 762.0 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 1177.0 հազ. դրամ կամ կատարվել է 154.5%:

բ) համայնքի տարածքում գտնվող օբյեկտները վերակառուցելու աշխատանքներ կատարելու թույլտվության մուտքերի գծով նախատեսված 352.0 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 372.0 հազ. դրամ կամ կատարվել է 105.7 %-ով:

գ) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար նախատեսված 40.0 հազ. դրամի դիմաց փաստցի մուտքերը կազմել են 30.0 հազ. դրամ կամ կատարվել է 75.0 %-ով:

դ) ) Համայնքի տարածքում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառեփքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար գազի և վառեփքաքսայուղային նյութերի վաճառքի գծով 2550.0 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 3415.0 հազ. դրամ կամ կատարվել է 133.9 %-ով:

ե) համայնքի տարածքում գտնվող խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար մուտքերի գծով նախատեսված 570.0 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 425.0 հազ. դրամ կամ կատարվել է 74.6 %-ով:

զ) համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար նախատեսված 850.0 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 955.0 հազ. դրամ կամ կատարվել է 112,4 %-ով:

է) համայնքի տարածքում ոգելից խմիչքներ և (կամ) ծխախոտի արտադրանքի ընթացիկ տարվա վաճառքի թույլտվության համար մուտքերի գծով նախատեսված 4930.0 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 5477.7 հազ. դրամ կամ կատարվել է 111.1% ով:

ը) համայնքի տարածքում բացօթյա վաճառք կազմակերպելու թույլտվության մուտքերի գծով նախատեսված 750.0 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 1938.8 հազ. դրամ կամ կատարվել 258.5 % - ով:

թ) համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00- ից հետո աշխատելու թույլտվության համար մուտքերի գծով նախատեսված 625.0 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 1679.6 հազ. դրամ կամ կատարվել է 268.7 %-ով:

ժ) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար մուտքերի գծով նախատեսված 1058.0 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 986.7 հազ. դրամ կամ կատարվել է 93.3 %-ով:

ի) համայնքի տարածքում ընթացիկ տարվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության մուտքերի գծով նախատեսված 6273.0 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 7203.5 հազ. դրամ կամ կատարվել է 114.8 %-ով:

լ) Հայաստանի Հանրապետության վարչատարածքային միավորների խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար մուտքերի գծով 0.0 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 100.0 հազ. դրամ:

խ) համայնքի տարածքում մարդատար տաքսի ծառայություն ընթացիկ տարում իրականացնելու թույլտվության մուտքերի գծով նախատեսված 60.0 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 40,0 հազ. դրամ կամ կատարվել է 66,7%-ով:

ծ) Համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար մուտքերի գծով նախատեսված 250.0 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 500.0 հազ. դրամ կամ կատարվել 200.0%-ով:

## 3. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ

Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհների գծով նախատեսված 567584.9 հազ. դրամի դիմաց փաստացի ֆինանսավորվել է 566667.7 հազ. դրամ կամ կատարվել է 99.8 %-ով:

ա) Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաների գծով նախատեսված 459407.5 հազ. դրամի դիմաց փաստացի ֆինանսավորվել է 459407.5 հազ. դրամ կամ կատարվել է 100.0 %-ով:

բ) Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումների (սուբվենցիաներ) գծով նախատեսված 1852.6 հազ. դրամի դիմաց փաստացի ֆինանսավորվել է 1852.6 հազ. դրամ կամ կատարվել է 100.0 %-ով:

գ) Համայնքի բյուջե մուտքագրվող արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով նախատեսված 12002.5 հազ. դրամի դիմաց փաստացի ֆինանսավորվել է 12002.5 հազ. դրամ կամ կատարվել է 100.0 %-ով:

դ) Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) նախատեսված 94322.3 հազ. դրամի դիմաց փաստացի ֆինանսավորվել է 93405.1 հազ. դրամ կամ կատարվել է 99.0 %-ով:

## 4. ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

Այլ եկամուտներից մուտքերի գծով նախատեսված 167973.2 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքագրվել 149653.5 հազ. դրամ կամ կատարվել է 89.1 %-ով:

Նույն թվում՝

1. Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության գծով նախատեսված 26063.0 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 20027.3 հազ. դրամ կամ կատարվել է 76.8 % - ով
2. Այլ գույքի վարձակալության գծով նախատեսված 2367.0 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 2205.4 հազ. դրամ կամ կատարվել է 93.2 % - ով:
3. Պետության կողմից ՏԻՄ-ներին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար ստացվող միջոցների գծով պլանով նախատեսված 5231.3 հազ. դրամի դիմաց փաստացի ֆինանսավորումը կազմել է 5105.6 հազ. դրամ կամ կատարվել է 97.6 %-ով:
4. Օրենքով սահմանված դեպքերում համայնքային հիմնարկների կողմից առանց տեղական տուրքի գանձման մատուցվող ծառայությունների կամ կատարվող գործողությունների դիմաց ստացվող (գանձվող) վճարների գծով նախատեսված 5231.0 հազ. դրամի փաստացի մուտքը կազմել է 4679.3 հազ. դրամ կամ կատարվել է նախատեսվածի նկատմամբ 89.5 %-ով:
5. Տեղական վճարների գծով նախատեսված 112746.9 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 93844.8 հազ. դրամ կամ կատարվել է 83.2 % - ով, այդ թվում աղբահանության վճարի գծով նախատեսված 33966.6 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 33740.6 հազ. դրամ կամ կատարվել է 99.3 %-ով:

1. Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարների գծով նախատեսված 5250.0 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 9887.1 հազ. դրամ կամ կատարվել է 188.3 % - ով:

2. Վարչական իրավախախտումների համար տեղական ինքնակառավարման մարմինների կողմից պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտներից նախատեսված 2250.0 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 5300.0 հազ. դրամ կամ կատարվել է 235.8 %_ով:

3. Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված համայնքի բյուջե մուտքագրվող այլ ոչ հարկային եկամուտների գծով նախատեսված 1550 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքը կազմել է 1320.0 հազ. դրամ կամ կատարվել է 85.2 %-ով:

*Արմավիր համայնքի 2021թ. բյուջեի իննամսյակում ընդամենը նախատեսված 946703.1 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 917529.4 հազ. դրամ կամ կատարվել է 96.9 %-ով, սեփական եկամուտների գծով նախատեսված 366602.9 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 338472.1 հազ. դրամ կամ կատարվել է 92.3%-ով:*

*ԾԱԽՍԵՐ*

Արմավիր համայնքի 2021թ. բյուջեն ինն ամսում ըստ ծրագրերի ծախսերը կատարվել են՝

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. « Օրենսդիր և գործադիր մարմիններ» 01 բաժին 1-ին խումբ 1-ին դաս՝ նախատեսված 129410.1 հազ. դրամի դիմաց դրամարկղային ծախսր կազմել է 107503.5 հազ. դրամ կամ կատարվել է 83.1 %-ով:
2. Աշխատակազմի /կադրերի/ գծով ընդհանուր բնույթի ծառայությունների գծով՝ ՔԿԱԳ բաժին, 01 բաժին 3-ին խումբ 1-ին դաս՝ նախատեսված 5530,0 հազ. դրամի դիմաց դրամարկղային ծախսը կազմել է 4231.6 հազ. դրամ կամ կատարվել է 76.5 %-ով:
3. «Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» 01 բաժին 3-ին խումբ 3-ին դաս՝ նախատեսված 5509.2 հազ. դրամի դիմաց դրամարկղային ծախսր կազմել է 3004.7 հազ. դրամ կամ կատարվել է 54.5 %-ով:
4. «Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ» 01 բաժին 6-ին խումբ 1-ին դաս՝ նախատեսված 41417.9 հազ. դրամի դիմաց դրամարկղային ծախսը կազմել է 23540.3 հազ. դրամ կամ կատարվել է 56.8 %-ով:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.Ոռոգում՝ 04 բաժին 2 խումբ 4 դաս՝ նախատեսված 19799.1 հազ. դրամի դիմաց դրամարկղային ծախսը կազմել է 19013.7 հազ. դրամ կամ կատարվել է 96.0 %-ով:

2. Ճանապարհային տրանսպորտ 04 բաժին 5 խումբ 1 դաս՝ նախատեսված 354426.9 հազ. դրամի դիմաց դրամարկղային ծախսը կազմել 173591.9 հազ. դրամ կամ կատարվել է 49.0 %-ով:

4. Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող) Ոչ ֆին. ակտիվների օտարումից մուտքեր 04 բաժին 9 խումբ 1 դաս՝ նախատեսված -25936.0 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են -47260.5 հազ. դրամ կամ կատարվել է 182.2 %-ով:

## ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

1.Աղբահանում 05 բաժին 1-ին խումբ 1-ին դաս՝ նախատեսված 132657.4 հազ. դրամի դիմաց դրամարկղային ծախսը կազմել 111505.8 հազ. դրամ կամ կատարվել է 84.1 %-ով:

## ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

1. Փողոցների լուսավորում 06 բաժին 4 խումբ 1-ին դաս՝ նախատեսված 31346.0 հազ. դրամի դիմաց դրամարկղային ծախսր կազմել է 25310.1 հազ. դրամ կամ կատարվել է 80.7 %-ով:

2. Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններ (այլ դասերին չպատկանող) 06 բաժին 6 խումբ 1-ին դաս՝ նախատեսված 3855.0 հազ. դրամի դիմաց դրամարկղային ծախսը կազմել է 3792.8 հազ. դրամ կամ կատարվել է 98.4 %-ով:

## ՀԱՆԳԻՍՏ. ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ

1. Գրադարաններ 08 բաժին 2 խումբ 1 դաս՝ նախատեսված 18354.1 հազ. դրամի դիմաց դրամարկղային ծախսր կազմել է 17376.4 հազ. դրամ կամ կատարվել է 94.7%-ով:

2. Մշակույթի տներ, ակումբներ, կենտրոններ 08 բաժին 2 խումբ 3 դաս՝ նախատեսված 16044.1 հազ. դրամի դիմաց դրամարկղային ծախսր կազմել է 15353.4 հազ. դրամ կամ կատարվել է 95.7 %-ով:

3. Այլ մշակութային կազմակերպություններ 08 բաժին 2 խումբ 4 դաս՝ նախատեսված 18826.0 հազ. դրամի դիմաց դրամարկղային ծախսր կազմել է 10602.4 հազ. դրամ կամ կատարվել է 56.3 %-ով:

## ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

1.Նախադպրոցական կրթություն ծախսերի գծով 09 բաժին 1-ին խումբ 1-ին դաս՝ նախատեսված 334054.5 հազ. դրամի դիմաց դրամարկղային ծախսը կազմել է 280889.4 հազ. դրամ կամ կատարվել է 84.1 %-ով:

2.Արտադպրոցական դաստիարակություն 09 բաժին 5 խումբ 1-ին դաս՝ նախատեսված 108027.7 հազ. դրամի դիմաց դրամարկղային ծախսը կազմել է 100509.0 հազ. դրամ կամ կատարվել է 93.0 %-ով:

## ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

1.Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող), 10 բաժին 7 խումբ 1-ին դաս՝ նախատեսված 10670.0 հազ. դրամի դիմաց դրամարկղային ծախսը կազմել է 8061.0 հազ. դրամ կամ կատարվել է 75.5 %-ով:

## ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ

1. ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ 11 բաժին 1-ին խումբ 2 դաս՝ նախատեսված մնացորդային գումարը կազմում է 62827.9 հազ. դրամ:

*Արմավիր համայնքի 2021թ. բյուջեի ինն ամսում ընդամենը նախատեսված 1266819.9 հազ. դրամի դիմաց դրամարկղային ծախսը կազմել է 857025.6 հազ. դրամ կամ կատարվել է 67.7 %-ով:*

## ԲՅՈՒՋԵԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԴԻՖԻՑԻՏԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

*Արմավիր համայնքի բյուջեի միջոցների տարեվերջի պակասուրդը (դեֆիցիտը) նախատեսված 260680.3 հազ. դրամի դիմաց փաստացի հավելուրդը կազմել է 60503.8 հազ. դրամ:*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavir.armavir@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 հոկտեմբերի 2021 թվականի N 95-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի ԹԻՎ 101-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասով և 33-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետով,«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օր ենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով՝

Արմավիր համայնքի ավագանին որոշում է.

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 25-ի «Արմավիր համայնքի 2021թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 101-Ն որոշման հավելվածների մեջ կատարել փոփոխություններ՝ համաձայն N2, N3,N4 հավելվածների.

1)Արմավիր համայնքի 2021թ. բյուջեի ծախսերում կատարել վերաբաշխում, այդ թվում՝

ա)01 բաժնի 6 խմբի 1դասի «Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)» ծրագրերի ծախսերի «Նախագծահետազոտական ծախսեր» 5134 հոդվածին ավելացնել 10500.0 հազար դրամ՝ Արմավիր քաղաքի Սահմանապահների փողոցի Հանրապետության-Աբովյան հատվածի, Աբովյան փողոցի Չարենց-Բաղրամյան հատվածի հիմնանորոգման և «Արմավիր քաղաքի թիվ 2 և թիվ 11 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ների հիմնանորոգման համար նախագծա-նախահաշվային փաստաթղթեր ձեռքբերելու համար:

բ)04 բաժնի 9 խմբի 1 դասի «Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող)» ծրագրերի ծախսերի «հողի իրացումից մուտքեր» 8411 հոդվածին ավելացնել -10500.0 հազար դրամ:

2)Արմավիր համայնքի 2021թ. բյուջեում կատարել համապատասխան փոփոխություններ:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

Դեմ -0 Ձեռնպահ -0

Կողմ -9

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԲԱՐՍԵՂՅԱՆ ՀԱՅԿ

ԴԱՐԲԻՆՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ԴՈՒԼԻՆՅԱՆ ՀԱՅԿ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԼԵՌՆԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԽԱՉԻԿ

ՄԵԼՈՅԱՆ ԱՐՍԵՆ

ՇԻՐՎԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ ԽՈՒԴԱԹՅԱՆ**

2021թ. հոկտեմբերի 15
ք. Արմավիր

ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2021Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 15 -Ի
ԹԻՎ 95-Ն ՈՐՈՇՄԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ 2

ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2021թ. ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ՝ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ

| Տողի NN | Բաժին | Խումբ | Դաս | Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումները | Ընդամենը (ս.7+ ս8) | այդ թվում տարեկան | Ընդամենը՝ վարչական բյուջե | այդ թվում տարեկան | Ընդամենը՝ ֆոնդային բյուջե | այդ թվում տարեկան |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | 6 | 6,4 | 7 | 7,4 | 8 | 8,4 |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | | | | | | |
| **2000** | **X** | **X** | **X** | ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ (տող2100+տող2200+տող2300+տող2400+տող2500+տող2600+ տող2700+տող2800+տող2900+տող3000+տող3100) | **0,0** | **0,0** | **0,0** | **0,0** | **0,0** | **0,0** |
| **2100** | **1** | **0** | **0** | ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ (տող2110+տող2120+տող2130+տող2140+տող2150+տող2160+տող2170+տող2180) | **10 500,0** | **10 500,0** | **0,0** | **0,0** | **10 500,0** | **10 500,0** |
| ***2110*** | ***1*** | ***1*** | ***0*** | *Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում, ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերություններ, արտաքին հարաբերություններ* | ***0,0*** | ***0,0*** | ***0,0*** | ***0,0*** | ***0,0*** | ***0,0*** |
| 2111 | 1 | 1 | 1 | Օրենսդիր և գործադիր մարմիններ,պետական կառավարում | 0,0 | 0,0 | 0,0 | | 0,0 | 0,0 |
| ***2160*** | ***1*** | ***6*** | ***0*** | *Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող),որից* | ***10 500,0*** | ***10 500,0*** | ***0,0*** | ***0,0*** | ***10 500,0*** | ***10 500,0*** |
| 2161 | 1 | 6 | 1 | Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող) | 10 500,0 | 10 500,0 | | | 10 500,0 | 10 500,0 |
| ***2490*** | ***4*** | ***9*** | ***0*** | *Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող)* | ***-10 500,0*** | ***-10 500,0*** | ***0,0*** | ***0,0*** | ***-10 500,0*** | ***-10 500,0*** |
| 2491 | 4 | 9 | 1 | Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող) | -10 500,0 | -10 500,0 | | | -10 500,0 | -10 500,0 |

ՀԱՎԵԼՎԱԾ N 3
ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2021Թ. ՀՈՎՏԵՄԲԵՐԻ 15 -Ի
ԹԻՎ 95-Ն ՈՐՈՇՄԱՆ

ՀԱՏՎԱԾ 3

ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2021թ. ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ՝ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ

| Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների | | | Ընդամենը (ս.5+ս.6) | այդ թվում | Ընդամենը՝ վարչական բյուջե | այդ թվում | Ընդամենը՝ ֆոնդային բյուջե | այդ թվում |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Տողի NN | անվանումները | NN | | տարեկան | | տարեկան | | տարեկան |
| 1 | 2 | 3 | 4 | 4,4 | 5 | 5,4 | 6 | 6,4 |
| 4000 | ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ (տող4050+տող5000+տող 6000) | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 |
| 4050 | Ա. ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ՝ (տող4100+տող4200+տող4300+տող4400+տող4500+ տող4600+տող4700) | x | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 |
| 5000 | Բ. ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ (տող5100+տող5200+տող5300+տող5400) | x | 10 500,0 | 10 500,0 | 0,0 | 0,0 | 10 500,0 | 10 500,0 |
| 5100 | 1.1. ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ (տող5110+տող5120+տող5130) | x | 10 500,0 | 10 500,0 | 0,0 | 0,0 | 10 500,0 | 10 500,0 |
| 5130 | ԱՅԼ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵ (տող 5131+տող 5132+տող 5133+տող5134) | x | 10 500,0 | 10 500,0 | 0,0 | 0,0 | 10 500,0 | 10 500,0 |
| 5134 | - Նախագծահետազոտական ծախսեր | 5134 | 10 500,0 | 10 500,0 | 0,0 | 0,0 | 10 500,0 | 10 500,0 |
| 6000 | Գ. ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ (տող6100+տող6200+տող6300+տող6400) | x | -10 500,0 | -10 500,0 | 0,0 | 0,0 | -10 500,0 | -10 500,0 |
| 6400 | ՉԱՐՏԱԴՐՎԱԾ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ՝ (տող6410+տող6420+տող6430+տող6440) | x | -10 500,0 | -10 500,0 | 0,0 | 0,0 | -10 500,0 | -10 500,0 |
| | այդ թվում՝ | | 0,0 | 0,0 | | | 0,0 | 0,0 |
| 6410 | ՀՈՂԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ | 8411 | -10 500,0 | -10 500,0 | | | -10 500,0 | -10 500,0 |

ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2021Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 15 -Ի
ԹԻՎ 95-Ն ՈՐՈՇՄԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ 6
ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2021թ. ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ

| Տողի NN | Բաժին | Խումբ | Դաս | Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումները | Ընդամենը (ս.7+ ս8) | այդ թվում տարեկան | Ընդամենը՝ վարչական բյուջե | այդ թվում տարեկան | Ընդամենը՝ ֆոնդային բյուջե | այդ թվում տարեկան |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 6,4 | 7 | 7,4 | 8 | 8,4 |
| **2000** | **X** | **X** | **X** | **ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ (տող2100+տող2200+տող2300+տող2400+տող2500+տող2600+ տող2700+տող2800+տող2900+տող3000+տող3100)** | **0,0** | **0,0** | **0,0** | **0,0** | **0,0** | **0,0** |
| **2100** | **1** | **0** | **0** | **ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | **10 500,0** | **10 500,0** | **0,0** | **0,0** | **10 500,0** | **10 500,0** |
| ***2160*** | ***1*** | ***6*** | ***0*** | ***Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող),որից*** | ***10 500,0*** | ***10 500,0*** | ***0,0*** | ***0,0*** | ***10 500,0*** | ***10 500,0*** |
| 2161 | 1 | 6 | 1 | Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող) | 10 500,0 | 10 500,0 | 0,0 | 0,0 | 10 500,0 | 10 500,0 |
| | | | | այդ թվում՝ ծախսերի վերծանումը ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման | | | | | | |
| | | | | Նախագծահետազոտական ծախսեր 5134 | 10 500,0 | 10 500,0 | | | 10 500,0 | 10 500,0 |
| ***2490*** | ***4*** | ***9*** | ***0*** | ***Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող)*** | ***-10 500,0*** | ***-10 500,0*** | ***0,0*** | ***0,0*** | ***-10 500,0*** | ***-10 500,0*** |
| 2491 | 4 | 9 | 1 | Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող) | -10 500,0 | -10 500,0 | | | -10 500,0 | -10 500,0 |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavir.armavir@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 հոկտեմբերի 2021 թվականի N 96-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի ԹԻՎ 72-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի սեպտեմբերի 16-ի թիվ 1531-Ն որոշմամբ, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 08.10.2021թ. թիվ ԳՍ/15.4/26215-2021 գրությունը՝

ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 14-ի «Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածը, աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 72-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1)որոշման N 1 հավելվածից հանել «8. Քաղաքացիական կացության ակտերի գրանցման Արմավիրի տարածքային բաժին» բառերը.

2)որոշման N 2 հավելվածից 1-ին կետում և 2-րդ կետի ընդամենը տողում «67» թիվը փոխարինել «66» թվով.

3)որոշման N 2 հավելվածի 2-րդ կետից հանել «Քաղաքացիական կացության ակտերի գրանցման Արմավիրի տարածքային բաժին՝ բաժնի պետ 1-260000, առաջին կարգի մասնագետ 2-115000» բառերը.

4)որոշման N 2 հավելվածի 2-րդ կետի Իրավաբանական բաժին՝

ա.«գլխավոր մասնագետ 1» բառերի փոխարեն կարդալ «գլխավոր մասնագետ 2» բառերը.

բ.«առաջատար մասնագետ 1» բառերի փոխարեն կարդալ «առաջատար մասնագետ 3» բառերը

գ.«երկրորդ կարգի մասնագետ 1-105000» բառերը հանել.

2.Առաջարկել Արմավիր համայնքի ղեկավարին Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կատարելու առաջարկությամբ մեկշաբաթյա ժամկետում սահմանված կարգով դիմել Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորված պետական կառավարման մարմին՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

3.Սույն որոշման 1-ին կետն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի կողմից համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կամ լրացումներ կատարելու մասին իրավական ակտը ուժի մեջ մտնելու պահից:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի նոյեմբերի 17-ին:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԲԱՐՍԵՂՅԱՆ ՀԱՅԿ

ԴԱՐԲԻՆՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ԴՈԼԻՆՅԱՆ ՀԱՅԿ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԼԵՌՆԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԽԱՉԻԿ

ՄԵԼՈՅԱՆ ԱՐՍԵՆ

ՇԻՐՎԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԴԱՎԻԹ ԽՈՒԴԱԹՅԱՆ**

ՀԱՎԵԼՎԱԾ
ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի
ԹԻՎ 72-Ա ՈՐՈՇՄԱՆ
ՀԱՎԵԼՎԱԾ
ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի
ԹԻՎ 09 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ԹԻՎ 96-Ա ՈՐՈՇՄԱՆ

# ԱՐՄԱՎԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների քանակը- 66 մարդ
2. Հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

| ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓ (ՀՀ ԴՐԱՄ) |
|---|---|---|
| ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ | | |
| Համայնքի ղեկավար | 1 | 440 000 |
| համայնքի ղեկավարի տեղակալ | 2 | 355 000 |
| ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ | | |
| համայնքի ղեկավարի օգնական | 2 | 185 000 |
| ԱՐՄԱՎԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐ | | |
| աշխատակազմի քարտուղար | 1 | 310 000 |
| աշխատակազմի գլխավոր մասնագետ | 1 | 145 000 |
| աշխատակազմի առաջատար մասնագետ | 1 | 125 000 |
| աշխատակազմի առաջին կարգի մասնագետ | 1 | 115 000 |
| ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ | | |
| բաժնի պետ | 1 | 180 000 |
| գլխավոր մասնագետ | 2 | 145 000 |
| I կարգի մասնագետ | 3 | 115 000 |
| II կարգի մասնագետ | 1 | 105 000 |
| ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԲԱԺԻՆ | | |
| բաժնի պետ | 1 | 180 000 |
| գլխավոր մասնագետ | 2 | 145 000 |
| I կարգի մասնագետ | 3 | 115 000 |
| ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՄՈՒՏՔԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՎ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ | | |
| բաժնի պետ | 1 | 180 000 |

| | | |
|---|---|---|
| առաջատար մասնագետ | 1 | 125 000 |
| I կարգի մասնագետ | 4 | 115 000 |
| ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԿՈՄՈՒՆԱԼ ՀԱՐՑԵՐ ԲԱԺԻՆ | | |
| բաժնի պետ | 1 | 180 000 |
| գլխավոր մասնագետ | 1 | 145 000 |
| առաջատար մասնագետ | 2 | 125 000 |
| I կարգի մասնագետ | 2 | 115 000 |
| ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺԻՆ | | |
| բաժնի պետ | 1 | 180 000 |
| գլխավոր մասնագետ | 2 | 145 000 |
| առաջատար մասնագետ | 3 | 125 000 |
| I կարգի մասնագետ | 1 | 115 000 |
| ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ, ՍՊՈՐՏԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ԲԱԺԻՆ | | |
| բաժնի պետ | 1 | 180 000 |
| գլխավոր մասնագետ | 1 | 145 000 |
| առաջատար մասնագետ | 1 | 125 000 |
| I կարգի մասնագետ | 3 | 115 000 |
| ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ, ՄՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ԳԱՆՁՄԱՆ ԲԱԺԻՆ | | |
| բաժնի պետ | 1 | 180 000 |
| գլխավոր մասնագետ | 1 | 145 000 |
| առաջատար մասնագետ | 1 | 125 000 |
| I կարգի մասնագետ | 2 | 115 000 |
| ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄ | | |
| տնտեսվար | 1 | 110 000 |
| քարտուղարուհի | 2 | 110 000 |
| վարորդ | 1 | 130 000 |
| անվտանգության պատասխանատու | 1 | 100 000 |
| պահակ | 2 | 92 618 |
| հավաքարար | 3 | 93288 |
| Անասնաբույժ | 1 | 93288 |
| կաթսայատան հնոցապան օպերատոր սեզոնային (01.11- ից 31.03) | 3 | 93288 |
| ընդամենը | 66 | |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavir.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 հոկտեմբերի 2021 թվականի N 97-Ա

### ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հարկային օրենսգրքի 230-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 429-րդ հոդվածով, հիմք ընդունելով «Հայաստանի ԴՕՍԱԱՖ» համահայկական հայրենասիրական ՀԿ նախագահի Ա. Հ. Թադևոսյանի 18.02.2021թ. թիվ 0655 գրությունը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀԿ-ին սեփականության իրավունքով պատկանող՝ Արմավիր քաղաքի Նանսենի փ. 50 հասցեում գտնվող անշարժ գույքը նվիրատվությամբ հանձնվում է Արմավիր համայնքին, գույքի նկատմամբ նախորդ տարիների համար հարկային պարտավորություններ չկան, հիմք ընդունելով Արմավիր համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1.2021 թվականի անշարժ գույքի հարկի արտոնություն սահմանել Արմավիր քաղաքի Նանսենի փ. 50 հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ՝ ընթացիկ տարվա համար 42027/քառասուներկու հազար քսանյոթ/ ՀՀ դրամ:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԲԱՐՍԵՂՅԱՆ ՀԱՅԿ

ԴԱՐԲԻՆՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ԴՈԼԻՆՅԱՆ ՀԱՅԿ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԼԵՌՆԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԽԱՉԻԿ

ՄԵԼՈՅԱՆ ԱՐՍԵՆ

ՇԻՐՎԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Դ ԽՈՒԴԱԹՅԱՆ**

2021թ. հոկտեմբերի 15
ք. Արմավիր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavir.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 հոկտեմբերի 2021 թվականի N 98-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստան Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 685-689-րդ հոդվածներով և հիմք ընդունելով Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» հասարակական կազմակերպության նախագահ Արթուր Նաջարյանի 2021 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 3540 գրությունը՝

ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1.Տալ համաձայնություն Արմավիր համայնքի սեփականության իրավունքով պատկանող՝ Արմավիր քաղաքի Ա. Ջիվանու փ. 40 հասցեում գտնվող վարչական շենքի առաջին հարկի տարածքից 110.0 քմ մակերեսով տարածքն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ին՝ Արմավիրում երիտասարդական կենտրոն հիմնելու և գործունեություն ծավալելու նպատակով:

2.Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» հասարակական կազմակերպության հետ կնքել անշարժ գույքի անհատույց օգտագործման պայմանագիր՝ 5 տարի ժամկետով:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԲԱՐՍԵՂՅԱՆ ՀԱՅԿ

ԴԱՐԲԻՆՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ԴՈԼԻՆՅԱՆ ՀԱՅԿ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԼԵՌՆԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԽԱՉԻԿ

ՄԵԼՈՅԱՆ ԱՐՍԵՆ

ՇԻՐՎԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ**

2021թ. հոկտեմբերի 15
ք. Արմավիր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavir.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 հոկտեմբերի 2021 թվականի N 99-Ա

### ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով Արմավիր համայնքի ավագանու՝ 2020 թվականի հունիսի 30-ի թիվ 40-Ն որոշումը, Արմավիր համայնքի ենթակայության թիվ 2, թիվ 5 մանկապարտեզների տնօրենների 2021 թվականի հոկտեմբերի 13-ի թիվ 3529, թիվ 3528 զեկուցագրերը և արտոնություններ ստանալու նպատակով ներկայացված անհրաժեշտ փաստաթղթերը՝

ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Համայնքային ենթակայության մանկապարտեզների ծառայությունից օգտվողների համար տեղական վճարի նկատմամբ զրոյական դրույքաչափի արտոնությունը կիրառել 2021 թվականի նոյեմբերի 1-ից՝ համաձայն հավելվածի՝

2.Որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի նոյեմբերի 1-ից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԲԱՐՍԵՂՅԱՆ ՀԱՅԿ

ԴԱՐԲԻՆՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ԴՈԼԻՆՅԱՆ ՀԱՅԿ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԼԵՌՆԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԽԱՉԻԿ

ՄԵԼՈՅԱՆ ԱՐՍԵՆ

ՇԻՐՎԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ

2021թ. հոկտեմբերի 15
ք. Արմավիր

ՀԱՎԵԼՎԱԾ
ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ15-Ի
ԹԻՎ 09 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ
ԹԻՎ 98 ՈՐՈՇՄԱՆ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ ՕԳՏՎՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԶՐՈՅԱԿԱՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԻ ԿԻՐԱՌՈՒՄ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆԸ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 1-ԻՑ ՍԱՀՄԱՆԵԼ՝

1. .<<Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի թիվ 2 մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի հիշյալ սանի համար՝

   1.Մնացականյան Անգելինա Մակիչի

2. <<Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի թիվ 5 մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի հիշյալ սանի համար՝

   1. Մնացականյան Մայքլ Մակիչի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ
# ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavir.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 հոկտեմբերի 2021 թվականի N 100-Ա

### ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿԻ ԵՎ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հարկային օրենսգրքի 230-րդ հոդվածի 3-րդ մասով և 245-րդ հոդվածի 2-րդ մասով՝

ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1.2021 թվականի անշարժ գույքի հարկի և փոխադրամիջոցների գույքահարկի արտոնություններ սահմանել հետևյալ ֆիզիկական անձանց՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԲԱՐՍԵՂՅԱՆ ՀԱՅԿ

ԴԱՐԲԻՆՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ԴՈԼԻՆՅԱՆ ՀԱՅԿ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԼԵՌՆԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԽԱՉԻԿ

ՄԵԼՈՅԱՆ ԱՐՍԵՆ

ՇԻՐՎԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ԽՈՒԴԱԹՅԱՆ**

2021թ. հոկտեմբերի 15
ք. Արմավիր

ՀԱՎԵԼՎԱԾ
ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈԻ
2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի
ԹԻՎ 100-Ա ՈՐՈՇՄԱՆ

| Հ/Հ | ՀՎՀՀ | Սոց. քարտ | Ազգանուն, անուն | Հաշվառման հասցեն | Գույքի գտնվելու հասցեն | Հարկի նվազեցում<br>2021թ. արտոն. չափը (դրամ) | Ում նախաձեռնությամբ |
|---|---|---|---|---|---|---|---|
| Անշարժ գույքի հարկի գծով | | | | | | | |
| 1 | SEE9241BB4 | 1207860425 | Հակոբյան Դավիթ | Սայաթ-Նովա 145տ. | Սայաթ-Նովա 145տ. | 3080 | Համաձայնողով |
| 2 | SE5382DBA3 | 7201570110 | Հարությունյան Ցոլիկ | Դարմոյան 1նրբ. 9տ. | Դարմոյան 1նրբ. 9տ. | 4219 | Համաձայնողով |
| Գույքահարկ փոխադրամիջոցների գծով | | | | | | | |
| 1 | SEFBBDFDBC | 5202730136 | Մուրադյան Նանա | Ա.Ջիվանի 15շ. 32բն. | Ա.Ջիվանի 15շ. 32բն. | 32250 | Համաձայնողով |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavir.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 հոկտեմբերի 2021 թվականի N 101-Ա

### ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ մասով, 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, Արմավիր համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 101-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Արմավիր համայնքի ավագանու 2019 թվականի մարտի 29-ի թիվ 22-Ա որոշմամբ ստեղծված հանձնաժողովի 2021 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 3536 եզրակացությունը՝

ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Արմավիր համայնքի 2021 թվականի բյուջեի «Սոցիալական հատուկ արտոնություններ»10 բաժնի 7 խմբի 1 դասի ծախսերի 4729 հոդվածի միջոցներից օգնություն հատկացնել սոցիալապես անապահով ընտանիքին՝համաձայն հավելվածի:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԲԱՐՍԵՂՅԱՆ ՀԱՅԿ

ԴԱՐԲԻՆՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ԴՈՒԼԻՆՅԱՆ ՀԱՅԿ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԼԵՌՆԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԽԱՉԻԿ

ՄԵԼՈՅԱՆ ԱՐՍԵՆ

ՇԻՐՎԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ

2021թ. հոկտեմբերի 15
ք. Արմավիր

ՀԱՎԵԼՎԱԾ
ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2021Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի ԹԻՎ 09
ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ԹԻՎ 101-Ա ՈՐՈՇՄԱՆ

| ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ ՀԱՅՐԱՆՈՒՆ | ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵ | ԳՈՒՄԱՐ |
|---|---|---|
| ՔՈԼՈՋՅԱՆ ԳՈՀԱՐ ՍԵՐԳԵՅԻ | Ք.ԱՐՄԱՎԻՐ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ Փ. 5 ՆՐԲ. 6 Տ | 30.000 |